

**ՍՈՒՏ ԿԸ ԽՕՍԻ՞Ս  
ՍՈՒՏ ՎԿԱՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ**

Այս մէկը անաստուածաբար սուտ վկայութիւն ընողներուն համար է: Այս մասին Աստուած խօսելով Մովսէսի հետ, Օրէնքի մէջ գրեց. «Սուտ մի՛ վկայեր» (Ելք. Ի. 13), ինչ որ մեծ անօրէնութիւն է:

Առաջին՝ ահեղ ու սոսկալի իրողութիւնը այն է, որ ճշմարտութիւնը Աստուծոյ անունն է եւ ամէն բանի զարդն ու աշխարհի պայծառութիւնն է. սուտ վկան աւերիչ ու կործանիչ է ճշմարտութեան, որովհետեւ կը վկայէ ո՛չ իր տեսածին եւ ո՛չ ալ գիտցածին մասին:

Երկրորդ, ուրիշներու մեղքերու ընկեր կ'ըլլայ եւ զանոնք կը հաստատէ իրենց գործած մեղքին ու չարիքին մէջ եւ ինք սատանային բնակարանը կ'ըլլայ, ինչպէս Տէրը ըսաւ. «Ան որ սուտ խօսի, ինքն իրմէ կը խօսի սուտը»: «Ինքն իրմէ»-ն այն է, որպէս թէ Աստուած կ'ըսէ. «Սուտը իմս չէ, այլ՝ սատանային, եւ սատանան է անոր հայրը, որ ծնաւ սուտը» (Յովհ. Ը. 44) եւ ամէն սուտ վկայ մասնակից է սատանային:

Բոլոր ստախօսները, եթէ ետ չդառնան ու չապաշխարեն, սատանային հետ տանջանքի եւ կորուստի պիտի մատնուին, համաձայն այն խօսքին, թէ՛ «Տէրը կը կորսնցնէ բոլոր սուտ խօսողները» (Սղ. Ե.7): Ճշմարտախօս բերանը Ս. Հոգիին դուռն է, իսկ ստախօս բերանը դժոխքի դուռն է եւ դեւերու մուտք: Հետեւաբար, ձեր բերանը ճշմարտութեան վարժեցուցէք, որպէսզի Ս. Հոգին բնակի ձեր մէջ:

Յովհաննէս Երզնկացի

**ՃԱՃԱՆՉ**




Ս. Պատարագի Ս. Սեղանին հիմնական զարդերէն մին է ճաճանչը, կլոր կամ ձուածեւ պատանդանի մը վրայ հաստատուած:

Ճաճանչները միշտ մետաղէ կ'ըլլան՝ շինուած արծաթէ կամ պղինձէ եւ ընդհանրապէս ոսկեգօծուած: Ճաճազայթները գեղեցիկ տեսք մը կու տան իրեն, ինչ որ յաճախ որպէս արուեստ գործ վեհօրէն կը բազմի Ս. Սեղանին վրայ:

Ճաճանչներուն կեդրոնը գետեղուած կ'ըլլայ տէրունի պատկեր մը:

Ճաճանչներ կան, որոնց կեդրոնը ապակիով գոցուած փոքր տուփ մը կայ, որուն մէջ Կենաց Փայտի կամ սուրբի մը մասունքը ամփոփուած կ'ըլլայ:

â Տօնական եւ հանդիսաւոր առիթներով տեսակաւոր ճաճանչներ Ս. Սեղանի բազմոցին վրայ գեղեցկագոյն զարդերը կը կազմեն:



ԶՈՒ ԽՕՍԵՐ ԽՍ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԸԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119-105)

ԺԵ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 15 ՄԱՅԻՍ 2022 ԹԻՒ 20

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ**

Գրծ. 17.1-15: Ա. Յհ. 1.1-10: Յհ. 7.14-24

(ՏՕՆ ԵՐԵՄԱՆ Ս. ԽԱԶԻ)

**ՅԻՍՈՒՍ ԲՐԻՍՏՈՍԻ ԱԷՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎԱՆՆԵՍ 7.14-24**

Տաղաւարահարաց տօնակատարութեան մօտաւորապէս կէսին, Յիսուս տաճար ելաւ եւ սկսաւ ուսուցանել: Հրեաները կը զարմանային եւ կ'ըսէին. «Ինչպէ՞ս այս մարդը Սուրբ Գիրքերը գիտէ, երբ բնաւ չէ ուսած զանոնք»:

Յիսուս պատասխանեց անոնց. «Ինչ որ ձեզի կ'ուսուցանեմ՝ իմ վարդապետութիւնս չէ, այլ անորը՝ որ զիս ղրկեց: Ով, որ կ'ուզէ Աստուծոյ կամքը կատարել, պիտի հասկնայ, թէ Աստուծմէ՞ է այս վարդապետութիւնը, թէ ես ի՞մ հեղինակութեամբ կը խօսիմ: Ան, որ իր հեղինակութեամբ կը խօսի՝ իր անձին համար փառք կը փնտռէ, իսկ ան, որ զինք ղրկողին փառքը կը փնտռէ, ճշմարիտ է եւ խաբէութիւն չկայ անոր մէջ: Մովսէս ձեզի Օրէնքը շտուա՞ւ, սակայն ձեզմէ ոչ որ կը հնազանդի Օրէնքին: Ինչո՞ւ կ'ուզէք զիս սպաննել»:

Ժողովուրդը պատասխանեց. «Դիւահա՞ր ես, ի՞նչ ես. ո՞վ կ'ուզէ քեզ սպաննել»:

Յիսուս պատասխանեց. «Հրաշք մը գործեցի եւ բոլորդ վրդովեք էք: Մովսէս հրահանգեց թլփատել ձեր զաւակները - թէն Մովսէս չէր սկսողը, այլ՝ ձեր նախահայրերը - եւ դուք ձեր զաւակները կը թլփատէք Շարաթ օրով: Եթէ մէկը կը թլփատէք Շարաթ օրով, որպէսզի չբեկանուի Մովսէսի Օրէնքը, ինչո՞ւ զայրացած էք ինձի դէմ, որովհետեւ մէկը ամբողջութեամբ բժշկեցի Շարաթ օրով: Երեսոյթներէն մի՛ դատէք, այլ արդար դատաստան կատարեցէ՛ք»:

**ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԽՆԴՐԱՆՔ**

Յիշէ՛ Տէր, քեզի ծառայողները: Մեր ծնողները, ուսուցիչները, եղբայրներն ու քոյրերը, ընկերները, մեզ կերակրողները, ուխտաւորները, ճամբորդները, մեզ հանգստացնողները, վաստակաւորները, խոստովանողները, ապաշխարողները, գերիները, հիւանդները, նեղեալները, իշխանութեան գլուխ գտնուողները, մեզի չարիք ընողները, բարերարները, թշնամիները, մեզ ատողները եւ անոնք, որոնք հաւատքով դաստիարակեցին մեզ:

# ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

## ԵՐԵՒԱՆ Ա. ԽԱՉԻ

Յինանց հինգերորդ Կիրակին կը կոչուի Երեւման խաչ եւ յիշատակն է Երուսաղէմ՝ խաչի նշանի երեւումին:

7 Մայիս, 351-ին Կիրեղ Երուսաղէմացի հայրապետի ժամանակ, Երուսաղէմի մէջ օր ցերեկով երկինքի վրայ կ'երեւի խաչի նշանը՝ Գողգոթայէն մինչեւ Զիթենեաց լեռը: Լուսապայծառ խաչի նշանը կ'երեւի բոլորին: Ի տես գարմանահրաշ այս երեւոյթին, ժողովուրդն ու եկեղեցականները եկեղեցի կը մտնեն Աստուծոյ գոհութիւն եւ փառք մատուցանելու համար:

Կիրեղ եպիսկոպոսը զարմանահրաշ այս դէպքը կը տեղեկացնէ Բիւզանդիոնի Կոստանդիանոս Կայսեր, եւ անոր կը խրախուսէ քրիստոնէական իր ամուր հաւատքին համար: Կիրեղ հայրապետի վերոյիշեալ գրութիւնը թարգմանուած է հայերէնի եւ կ'ընթերցուի Երեւման Խաչի տօնի օրը:

Երեւման Խաչի սրբոյ տօնը յատուկ է միայն հայերուն եւ յոյներուն: Կաթողիկէ եկեղեցին այս անունով խաչի տօն չունի:

Երեւման խաչի տօնը յատուկ շարական չունի, այլ՝ նոյն օրը կ'երգեն խաչի միւս տօներու շարականները, որոնցմով կը փառաբանուի խաչը:

**Իյանի՛ սյն մայրաւն,  
դուն Տէրդ անօրէնութիւն  
չի սեպէր ու անոր կողմին մէջ  
նենգութիւն չկայ:**

(ՍԱՂՄՈՍ 32.2)

# ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ

## Ո՛Վ Է ԱՂՔԱՏ ՄԱՐԴ

1. Այն մարդը, որ բարեկամ չունի:
2. Այն մարդը, որ զինք դատապարտող խիղճ չունի:
3. Այն մարդը, որ անձը գսպելու անկարող է:
4. Այն մարդը, որ անձնատէր է:
5. Այն մարդը, որ նկարագիրը դրամի հետ փոխած է:
6. Այն մարդը, որուն կինը եւ ընտանիքը զինք չեն սիրեր:
7. Այն մարդը, որ յոյսը եւ հաւատքը կորսնցուցած է:
8. Այն մարդը, որ Յիսուսը իրեն բարեկամ չէ ըրած:
9. Այն մարդը, որ Ս. Գիրք չունի ու ատով չի մխիթարուիր:
10. Այն մարդը, որ Երկինքը գանձ չէ դիզած:
11. Այն մարդը, որ ուրիշին տալիք չունի:
12. Այն մարդը, որ չի կրնար բարիով յաղթել չարին:

## ԼՈՒՍՈՎԴՒ ՔՈՒ ՔՐԻՍՏՈՍ

**Լուսովդ քո Քրիստոս, ամենեքեան լուսաւորեցաք, եւ ի սուրբ խաչ քո, փրկիչ, հաւատացեալքս ապաւինեցաք: Լուր մեզ, Աստուած փրկիչ մեր. տուր մեզ զխաղաղութիւն քո, եւ արա առ մեզ զողորմութիւն քո, մարդասէր Տէր:**

Քու յոյսովդ, Քրիստոս ամենքս լուսաւորուեցանք եւ հաւատացեալներս Փրկիչ, քու սուրբ Խաչիդ ապաւինեցանք: Լսէ մեզ, Աստուած՝ մեր փրկիչը, քու խաղաղութիւնդ տուր մեզի, եւ քու ողորմութիւնդ շնորհէ մեզի, մարդասէր Տէր:

# Հ ՈՔԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

## ԱՂՔՆԵՔ ՏԻՐՈՋ ՄԵՐ ԶԱՎԱՆՆԵՐՈՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Մարդ մը մօտեցաւ, ծունկի եկաւ Յիսուսի առջեւ: Այս մարդը հիւանդ էր չար ոգիով բնակուած փոքրիկի մը հայրն էր: Հայր մը, որ ծունկի եկած էր ամենակալ Յիսուսին դիմաց եւ ազատագրութիւն կ'աղաչէր իր որդիին համար:

## ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ ՈՔԵՒՈՐ ԴԱՍԸ

Առաջին բանը, որ կը սորվինք հոս յիշուած հօր վերաբերմունքէն այն է, որ պէտք է հայրեր եւ մայրեր պատրաստ ըլլան ծունկի գալու Յիսուսի դիմաց եւ խնդրելու անկէ փրկութիւն եւ ազատագրութիւն իրենց զաւակներուն համար: Ազատագրութիւնը միայն չար ոգիով բնակուած մարդոց համար չէ, այլ՝ բոլոր անոնց համար՝ որոնք իսկական ապաշխարութեամբ չեն ազատագրուած մեղքի ստրկութենէն: Երկրորդ ճշմարտութիւնը, որ կը սորվինք այն է, որ մեղքը կամ մեղքի գիտակցութիւնը մեզ ծունկի կը բերէ եւ պէտք է բերէ Յիսուսի դիմաց, ինչպէս բերաւ փոքրիկին հայրը: Այս հայրը կարիքը ունէր Յիսուսի եւ ծունկի եկաւ Յիսուսի դիմաց: Մեծագոյն դժբախտութիւնը այն է, որ մարդ չզգայ, թէ ինք կարիքը ունի Յիսուսի:

# ԵՅԵ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

## ԱՆՄԵՂԻՆ ԱՂՕԹՔԸ ՍԱՂՄՈՍ 16

Ո՛Վ ՏԵՐ, լսէ՛ արդար բողոքս, մտի՛կ ըրէ աղաղակս, ականջ տուր աղօթքիս, որ նենգատր շրթներէ չի գար: Դատավճիռս դո՛ն տուր, տէ՛ս իմ ուղիղ ըլլալս: Դատավճիռս դո՛ն տուր, գիշեր ատեն եկար եւ փորձեցիր սիրտս, կրակով քննեցիր եւ չարութիւն չգտար մէջս, ո՛չ ալ բերնիս մէջ անիրաւութիւն: Տեսայ մարդոց գործերը, բայց քու խօսքիդ հետեւելով հեռու մնացի արիւնսահեղ մարդոց ապրելակերպէն: Քայլերս քու շաւիղներուդ մէջ պահէ, որպէսզի ընթացքս չշեղի: Ես քե՛զ կը կանչեմ, որովհետեւ գիտեմ, թէ պատասխան պիտի տաս, ո՛վ Աստուած, ականջդ ինձի խոնարհեցուր, լսէ՛ խօսքերս: Մքանչելի կերպով ցոյց տուր քու սէրդ: Դուն, որ քեզի ապաւինողները քու աջովդ կը փրկես իրենց հակառակորդներէն: Աչքի բիթի պէս պահէ զիս պահպանէ ամբարիշտներէն, որոնք կեանքիս կը սպառնան, մահացու թշնամիներես, որոնք պաշարած են զիս: Իրենց հարստութեան վստահած եւ գութը մոռցած՝ ամբարտաւանութեամբ կը բանան իրենց բերանը: Ահա կը հետապնդեն զիս, եւ զիս պաշարած՝ ակնդետ կը հետեւին ինձի, զիս գետին տապալելու համար, առիծի մը պէս՝ որ կ'ուզէ բզրկտել, կորիւնի մը պէս՝ որ դարան մտած կը սպասէ: Ե՛լ ո՛վ ՏԵՐ, անունց ճամբան կտրէ, զանոնք տապալէ՛. քու սուրովդ կեանքս փրկէ՛ ամբարիշտներու ձեռքէն: